

Համաձայն 2008 թվականի հունիսի 17-ի “Սպառողական կրեդիտավորման մասին” ՀՀ օրենքի բանկի կողմից պետք է հաշվարկվի վարկի փաստացի տոկոսադրույքը:

Փաստացի տոկոսադրույքը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$A = \sum_{n=1}^N \frac{K_n}{(1+i)^{\frac{D_n}{365}}}$$

Որտեղ՝

i – տարեկան փաստացի տոկոսադրույքն է, որը վարկառուի կրեդիտավորման ընդհանուր ծախսն է, արտահայտված տրամադրված կրեդիտի տարեկան տոկոսով, և որն իր մեջ պարունակում է բոլոր տոկոսներն ու այլ վճարումները, որոնք սպառողը պարտավոր է վճարել կրեդիտի ստացման, ինչպես նաև դրա գործողության ողջ ընթացքում:

A – վարկառուին տրամադրվող վարկի սկզբնական գումարն է:

n – վարկառուի կողմից վարկի մարմանն ուղղված (վարկի մայր գումար, տոկոսագումարներ և(կամ) այլ վճարումների գումարներ) վճարի (ներառյալ վարկիի ստացման պահին կատարվող վճարի) հերթական համարն է: Ընդ որում, մեկ օրվա ընթացքում վարկի մայր գումարի, տոկոսագումարների և(կամ) այլ վճարումների կատարումը համարվում է մեկ վճարում:

N – վարկի մարմանն (վարկի մայր գումար, տոկոսագումարներ և(կամ) այլ վճարումների գումարներ) ուղղված վերջին վճարի համարն է՝ ներառյալ նաև վարկի ստացման պահին կատարվող վճարը, որից հետո վարկառուի կողմից վարկային պայմանագրով ստանձնած պարտավորությունները համարվում են մարված:

K_n – վարկառուի կողմից վարկի ստացման պահին և(կամ) վարկի գործողության ընթացքում կատարված հերթական *n*-րդ վճարի գումարն է (մայր գումար, տոկոսագումարներ և (կամ) այլ վճարումների գումարներ):

D_n – այն թիվն է, որը ցույց է տալիս, թե քանի օր է անցել վարկի ստացման օրից մինչև վարկի գումարի հերթական *n*-րդ մարման օրը ներառյալ:

Օրինակ՝

Ենթադրենք Դուք վերցնում եք “Կոնվերս” վարկ 1,000,000.00 ՀՀ դրամ 12 ամիս մարման ժամկետով, 24% տոկոսադրույքով և նվազող վճարումների գրաֆիկով:

Այս վարկը ստանալիս անհրաժեշտ է կատարել 3,000.00 ՀՀ դրամ վճար, իսկ մարումները կկատարվեն հետևյալ սանդղակի համաձայն՝

	Մայր գումար	Տոկոս	Ընդամենը
1	83,333.33	20,383.56	103,716.89
2	83,333.33	16,876.71	100,210.05
3	83,333.33	16,986.30	100,319.63
4	83,333.33	14,794.52	98,127.85
5	83,333.33	13,589.04	96,922.37
6	83,333.33	11,506.85	94,840.18
7	83,333.33	10,520.55	93,853.88
8	83,333.33	8,219.18	91,552.51
9	83,333.33	6,575.34	89,908.68
10	83,333.33	5,095.89	88,429.22
11	83,333.33	3,287.67	86,621.00
12	83,333.33	1,698.63	85,031.96

Կատարենք հաշվարկը՝

$$1,000,000 = \frac{3,000.00}{(1+i)^{\frac{0}{365}}} + \frac{103,716.89}{(1+i)^{\frac{31}{365}}} + \frac{100,210.05}{(1+i)^{\frac{59}{365}}} + \dots + \frac{85,031.96}{(1+i)^{\frac{365}{365}}}$$

Հաշվարկի արդյունքում կստանանք, որ փաստացի տարեկան տոկոսադրույքը կազմում է՝

$i = 27.64\%$ տարեկան: